Հավելված N 396
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

<< Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսական նորարարությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.5-Ղ4-14)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5:

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ աշխատանքների իրականացումը՝ նորարարությունների տեղայնացման նպատակով փորձի փոխանակման և վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում,
2. ապահովում է գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը,
3. ապահովում է գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Իրավունքները՝

- շահագրգիռ մարմիններից, նախարարության ստորաբաժանումներից և ենթակա մարմիններից ստանալ առաջարկություններ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների միջոցով գյուղատնտեսական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման, գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և

օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունն ապահովելու վերաբերյալ,

- համագործակցել գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների, տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ, ստանալ առաջարկություններ գործակցության ընդլայնման նպատակով,
- համագործակցել գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ, ստանալ առաջարկություններ և համապատասխան տեղեկատվություն գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման վերաբերյալ,
- Բաժնի իրավասության ներքո գտնվող հարցերի շուրջ հրավիրել խորհրդակցություններ՝ պետական կառավարման մարմինների համապատասխան մասնագետների, այլ փորձագետների մասնակցությամբ, ձևավորել աշխատանքային խմբեր՝ ներգրավելով մասնագետների, գիտական հաստատություններից ներկայացուցիչների և փորձագետների,
- մասնակցել պետական մարմիններում և այլ կազմակերպություններում ոլորտին առնչվող թեմաներով կազմակերպված խորհրդակցություններին և քննարկումներին:

Պարտականությունները՝

- քննարկել տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ նորարարությունների տեղայնացման վերաբերյալ ստացված տեղեկատվությունը, կազմել անհրաժեշտ փաստաթղթեր, հետևելլ վերապատրաստումների, կադրերի և տեղեկատվության փոխանակման գործընթացներին, կատարել հաջողված փորձի զանգվածային տարածման աշխատանքներ,
- ուսումնասիրել գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման ուղղությամբ ստացված տեղեկատվությունը, ներկայացնել առաջարկություններ դրանց իրականացման գործընթացի վերաբերյալ, տնտեսավարողներին ծանոթացնել համաշխարհային շուկայում առկա նորարական լուծումներին,
- ուսումնասիրել գյուղացիական փոքր տնտեսությունների համար փորձացուցադրական տարածքներում նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու, գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը ձևավորելու նպատակով ստացված առաջարկությունները, նախապատրաստել համապատասխան խորհրդատվական միջոցառումներ, հետևել դրանց իրականացման ընթացքին,
- ուսումնասիրել գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ գիտության բնագավառում համագործակցության շրջանակներում ստացված առաջարկությունները, հետևել արդյունքների ամփոփման, եզրակացության տրամադրման աշխատանքներին,
- նախապատրաստել Բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր,

- քննարկել քաղաքացիներից ստացված դիմումները, բողոքները, առաջարկությունները, ներկայացնել առաջարկություններ խնդիրների լուծման համար:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ և մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: